

# Մարզպետարանի տնօրինության տակ գտնվող տեղեկատվական համակարգերի և դրանց օգտագործման կարգի նկարագրություն

## Մարզպետարանի տեղեկատվական կենտրոն

Մարզպետարանում գործում է տեղեկատվական կենտրոն, որի նպատակն է հանրությանը մատուցել մատչելի տեղեկատվություն, ինչպես նաև հնարավորություն ստեղծել մարզպետարանի և այլ պաշտոնական կայքերում առկա տեղեկատվությանը տեղում ծանոթանալու, մարզպետարանի պաշտոնատար անձանց առցանց նամակներ և հարցումներ հղելու համար:

Տեղեկատվական կենտրոնում առկա են հեռախոսակապ (+374 281) 2.06.11, պատճենահանման սարք, տպիչ, 2 համակարգիչներ, որոնք ապահովված են ինտերնետ կապով:

Տեղեկատվական կենտրոնում տրամադրվում են անհրաժեշտ տեղեկություններ մարզպետարանի պաշտոնատար անձանց դիմելու նպատակով տեղեկատվության հարցման օրինակելի ձևերի, մարզպետարանի կանոնադրական գործառույթների, կառուցվածքի, ինչպես նաև Վայոց ձորի մարզի համայնքների և ենթազերատեսչական կազմակերպությունների վերաբերյալ:

Կենտրոնը ստեղծում է հնարավորություն նաև պաշտոնատար անձանց ուղղված առցանց նամակների ընթացքին ծանոթանալու համար:

Մարզպետարանի տեղեկատվական կենտրոնն ապահովում է <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով սահմանված գործառույթների ամբողջական իրականացումը և մարզպետարանի տնօրինման տակ գտնվող տեղեկությունների մատչելի մատուցումը: